Կարգապահական գործ թիվ ԿԳ-17187

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի մայիսի 31-ի թիվ 124-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/93-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Հրանտ Անանյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սարգիս Բարսեղյանին (արտոնագիր թիվ 885) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Նվարդ Խաչատրյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Պալատ հայտնել է, որ դատական կարգով գումարի բռնագանձման գործով իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դիմել է Սարգիս Բարսեղյանին **(այսուհետ նաև՝ Պատասխանող)** և նրան վճարել 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլար, նրան տրամադրել է լիազորագիր՝ իր անունից հանդես գալու և անհրաժեշտ գործողություններ կատարելու համար:

Դիմողը նշել է, որ տեղյակ էր, որ իր գործով պարտապան Կարինե Խոստեղյանն ունի սեփականություն և որպեսզի իրեն պատկանող գույքը չօտարվի խնդրել էր փաստաբան Սարգիս Բարսեղյանից միջնորդել դատարանին կիրառել հայցի ապահովման միջոց: Հայցը ներկայացնելուց հետո Պատասխանողը հավաստիացրել է, որ հայցի ապահովումը կիրառվել է և գույքի վրա արգելանքները դրված են, իսկ 20.02.2017թ. վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանի կողմից տրված կատարողական թերթը ներկայացվել է: Հունիս ամսին դիմողը Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունից տեղեկացել է, որ Կարինե Խոստեղյանն որևէ գույք չունի, իսկ հայցի ապահովում չի կիրառվել, քանի որ որևէ կատարողական թերթ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն մուտք չի արվել: Այս հարցով դիմելով

Պատասխանողին, վերջինիս կողմից ստացել է պատասխան, որ դատարանը պետք է կատարողական թերթը ուղարկեր Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն: Սակայն, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունից իրեն հայտել են, որ դա կողմի պարտականությունն է, այդ ժամանակ փաստաբան Սարգիս Բարսեղյանը Դիմողին ասել է, որ դա իր վրիպումն է:

Դիմողը հայտնել է նաև, որ դրանից հետո դիմել է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ խնդրելով տրամադրել Արարատի մարզի, Արարատ համայնքի Սահմանապահների 61 հասցեում գտնվող բնակելի տան կադաստրային գործը, ինչից հետո պարզվել է, որ հայցի ապահովում կիրառված չլինելու պատճառով Կարինե Խոստեղյանը կարողացել է օտարել նշված հասցեում գտնվող տունը:

Դիմողը խնդրել է պատասխանատվության ենթարկել փաստաբան Սարգիս Բարսեղյանին:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 27.11.2017թ. թիվ 466-Ա/ԿԳ-17187 որոշմամբ փաստաբան Սարգիս Բարսեղյանի (արտոնագիր թիվ 885) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 2.6.1, 2.7.2, 3.1.8. և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

01.12.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Խորհրդի նիստին ներկայացել է Դիմողը Նվարդ Խաչատրյանը և ըստ էության հաստատել է դիմումում նշված հանգամանքները: Նա նշել է, որ փաստաբանը տեղյակ է եղել դատարանից ուղարկված բոլոր նամակներից, ինքը նույնպես դատարանից ստացել է բոլոր նամակները և ստանալուն պես այդ մասին տեղեկացրել է փաստաբանին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

11.12.2017թ. Պալատ մուտքագրված դիմումով Սարգիս Բարսեղյանը հայտնել է, որ ինքը դիմողին ցույց է տվել բարեխիղճ իրավական օգնություն, իր մասնագիտական կարողությունների սահմաններում, այն է՝ Դիմողի հանձնարարության վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում, որոնց արդյունքում կայացվել է հայցապահանջը բավարարող դատական ակտ: Ինչ վերաբերում է դիմողի կողմից իրեն վերագրվող խախտումներին, ապա դրանք ամբողջապես իրականությանը չեն

համապատասխանում: Որպես հայցվորի ներկայացուցիչ հայցը ներկայացնելիս ինքը միջնորդություն է ներկայացրել դատարանին՝ կիրառելու հայցի ապահովման միջոց, արգելանք դնելու պատասխանողին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա, որի մասին տեղեկացրել է Նվարդ Խաչատրյանին, սակայն հայցը ներկայացնելուց հետո նրան չի հավաստիացրել, որ հայցի ապահովումը կիրառվել է և պատասխանողի գույքի վրա արգելանք է դրված: Ինքը դատարանից չի ստացել հայցի աապահովում կիրառելու մասին որոշումը և կատարողական թերթը, Դիմողը նույնպես իրեն չի հանձնել այդ փաստաթղթերը: Ինքը դիմողին չի հավաստիացրել, որ հայցի ապահովումը կիրառվել է և գույքի վրա արգելանք է դրված, Դիմողին չի հայտնել, որ դատարանը պետք է կատարողական թերթն ուղարկեր ԴԱՀԿ ծառայություն, որ կատարողական թերթը ԴԱՀԿ ծառայություն չներկայացնելն իբրև իր վրիպումն է եղել:

12.01.2018թ. Պալատ մուտքագրված դիմումով Սարգիս Բարսեղյանը հայտնել է. որ իր դիմումի հիման վրա ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրամադրված գրություններից տեղեկացել է, որ թիվ ԱՎԴ1/0289/02/16 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, նախնական դատական նիստ նշանակելու մասին դատարանի 29.02.2016թ. որոշման, նույն օրվա հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման և այդ որոշման կատարողական թերթի բնօրինակները իրեն, որպես հայցվորի ներկայացուցչի, դատարանի կողմից պատշաճ չի ուղարկվել, դրանք փոստային ծառայության միջոցով ուղարկվել են սխալ հասցեով՝ ք.Երևան, Գ.Հարությունյան 8/3 հասցեով, և ոչ թե իր՝ ք.Երևան, Գ. Հասրաթյան 8/3 հասցեով, ինչի պատճառով ինքն այդ փաստաթղթերը դատարանից չի ստացել, այդ փաստաթղթերով ծրարը 01.04.2016թ. վերադարձվել է դատարան: Ներկայումս էլ այդ որոշումների և կատարողական թերթի բնօրինակները պահվում են քաղաքացիական գործում: Հետևաբար ինքը նշված կատարողական թերթի բնօրինակը չի ստացել և չէր կարող ներկայացնել ԴԱՀԿ ծառայություն: Դատարանից ստացված մեկ այլ գրությունից տեղեկացել է նաև, որ հայցվոր Նվարդ Խաչատրյանը դատարանից պատշաճ ստացել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումը և կատարողական թերթը: Վերջինս կատարողական թերթը անձամբ պետք է ներկայացներ ԴԱՀԿ ծառայություն կամ հանձներ իրեն, որ ինքը դրանք հանձներ ԴԱՀԿ ծառայությանը, սակայն վերջինս այդ գործողությունները չի կատարել, ու այդ իր թերացումը անհիմն կերպով վերագրում է իրեն:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

31.01.2018թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանը կազմել է եզրակացություն, որի համաձայն նՆախապատարաստողը գտել է, որ Պատասխանողը կարող էր և պարտավոր էր իմանալ քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման և այդ որոշման հիման վրա տրված կատարողական թերթը ԴԱՀԿ ծառայություն ներկայացնելու կամ չներկայացնելու մասին:

06.02.2018թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2018 թվականի մայիսի 31-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Պատասխանողը հանդիսացել է Դիմողի ներկայացուցիչը:

Նշված փաստը հաստատվում է 26.02.2016թ. տրված լիազորագրի պատճենով, դատարան ներկայացված հայցադիմումի պատճենով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով :

2. Դատարանը 29.02.2016 թվականին որոշում է կայացրել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Նշված փաստը հաստատվում է դատարանի 29.02.2016 թվականին՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ:

3. Դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու կատարողական թերթը չի ներկայացվել ԴԱՀԿ ծառայություն, ինչի արդյունքում արգելանք չի կիրառվել Կարինե Խոստեղյանին պատկանող գույքի վրա:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, 29.02.2016թ. հայցի ապահովման միջով կիրառելու մասին որոշմամբ, 07.09.2016թ. անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագրով:

4. Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 29.02.2016թ. որոշման և կատարողական թերթի բնօրինակները Պատասխանողին ուղարկվել են 29.02.2016թ. փոստային ծառայության միջոցով ք. Երևան Գ. Հարությունյան 8/3 հասցեով, սակայն ծրարը փոստի կողմից Պատասխանողին չի հանձնվել և 01.04.2016թ. դատարան է վերադարձվել «Չպահանջված» նշումով:

Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությունով, 12.01.2018թ. ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատարի կողմից տրված գրությամբ:

5. 07.09.2016 թվականին կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, որի համաձայն Կարինե Խոստեղյանը վաճառել է Արարատի մարզի, Արարատ համայնքի Սահմանապահների 61 հասցեում գտնվող գույքը:

Նշված փաստը հաստատվում է 07.09.2016 թվականին կնքված առքուվաճառքի պայմանագրով:

6. 20.02.2017 թվականին կայացված վճռով Նվարդ Խաչատրյանի հայցը ընդդեմ Կարինե Խոստեղյանի բավարարվել է:

Նշված փաստը թիվ ԱՎԴ1/0289/02/16 20.02.2017 թվականի դատարանի կողմից կայացված վճռով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Սարգիս Բարսեղյանի (արտոնագիր 885, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սարգիս Բարսեղյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.6.1 և 3.1.8 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. <u>Կանոնագրքի 2.7.2, և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.</u>

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ բարեխղճորեն, ջանասիրաբար և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր

հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ փաստաբան Սարգիս Բարսեղյանի կողմից 29.02.2018թ.ներկայացվել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Նույն օրը դատարանի որոշմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց և տրամադրվել է կատարողական թերթ: Սակայն կատարողական թերթը չի ներկայացվել կատարման, որի արդյունքում հայցի ապահովման միջոց հանդիսացող գույքը օտարվել է:

Անդրադառնալով Պատասխանողի այն պնդմանը, որ իրեն չի ուղարկվել հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը և կատարողական թերթը, ուստի ինքը չգիտեր այդ մասին և չէր կարող կատարման ներկայացնել կատարողական թերթը, Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը պարտավոր էր հետևողականություն դրսևորել իր կողմից ներկայացված միջնորդության քննարկմանը և համապատասխան միջոցներ ձեռնարկել պարզելու համար, թե ինչ որոշում է կայացվել դատարանի կողմից իր կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ:

Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի նման վարքագիծը վկայում է այն մասին, որ նա պատշաճ բարեխղճություն և ջանասիրություն չի ցուցաբերել իր վստահորդի և նրա գործի նկատմամբ, չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ չի դրսևորել հետևողականություն, որի արդյունքը եղել է ի վնաս իր վստահորդի:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սարգիս Բարսեղյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում, ինչի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

7.2. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
4) փուգանք (…):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, այդ թվում՝ կատարված խախտման հետևանքները և փաստաբանի անձը, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը՝ միաժամանակ սահմանելով լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

7.3. <u>Կանոնագրքի 2.6.1 և 3.1.8 ենթակետերի խախտման մասով.</u>

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ *Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Անդրադառնալով Կանոնագրքի 2.6.1 և 3.1.8 ենթակետերի խախտման հանգամանքին Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք կհաստատեն փաստաբանի կողմից այս ենթակետերի խախտման փաստը:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ *Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, տվյալ դեպքում Դիմողը:*

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան*

պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Կանոնագրքի 2.6.1 և 3.1.8 ենթակետերի խախտման հանգամանքը հիմնավորող բավարար ապացույցների բացակայության պարագայում Պալատի Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սարգիս Բարսեղյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն այդ մասով ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 39.9-րդ հոդվածի 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Սարգիս Բարսեղյանին (արտոնագիր՝ 885) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Սարգիս Բարսեղյանի (արտոնագիր՝ 885) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 6 ամսվա ընթացքում 4 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Սարգիս Բարսեղյանի (արտոնագիր՝ 885) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 2.6.1 և 3.1.8 ենթակետերի մասով՝ կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյան

31 մայիսի 2018թ.
թիվ ԿԳ/93-Ա
ք. Երևան